ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 22 » մայիս 2025թ, No 3119 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/2325-25 առ 19.05.2025թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել թվով 3 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1)Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի մայիսի « 22 » - ի N 3119- Ա հրամանի

ԳՐԱՆՑՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ
1	Ֆորկորիում	մոմետազոն (մոմետազոնի ֆուրոատ), գենտամիցին (գենտամիցին սուլֆատ), դեքսպանթենոլ, էկոնազոլ (էկոնազոլ նիտրատ)	նրբաքսուք	0,5մգ+1մգ+50մգ+10մգ; 15գ ալյումինե պարկուճ	Վերտեքս ԲԸ, 197350, Սանկտ Պետերբուրգ, Դորոգա վ Կամենկու, 62, լիտ.Ա	Ռուսաստան	Վերտեքս ԲԸ, 197350, Սանկտ Պետերբուրգ, Դորոգա վ Կամենկու, 62, լիտ.Ա	Ռուսաստան	Դ	23052 16.05.2025
2	ԳԵՆՖԵՐՈՆ	ինտերֆերոն ալֆա-2բ, բենզոկային, տաուրին	մոմիկներ հեշտոցային և ուղիղաղիքային	500000ՄՄ+55մգ+10մգ; (10/2x5/)	ՊԿ-137 ՍՊԸ, տուն 2, 5557-րդ անցում, Զելենոգրադ, ներքաղ. տարածք. մունիցիպալ շրջան Սիլինո, Մոսկվա, 124460	Ռուսաստան	ԲԻՈԿԱԴ ԲԸ, տ. 38, մասնաշենք 1, տար.89, ներքաղ.տարածք գյուղ Ստրելնա, փ. Սվյազի, Սանկտ Պետերբուրգ, 198515	Ռուսաստան	Դ	23053 16.05.2025
3	ԳԵՆՖԵՐՈՆ	ինտերֆերոն ալֆա-2բ, բենզոկային, տաուրին	մոմիկներ հեշտոցային և ուղիղաղիքային	1000000ՄՄ+55մգ+10մգ; (10/2x5/)	ՊԿ-137 ՍՊԸ, տուն 2, 5557-րդ անցում, Զելենոգրադ, ներքաղ. տարածք. մունիցիպալ շրջան Սիլինո, Մոսկվա, 124460	Ռուսաստան	ԲԻՈԿԱԴ ԲԸ, տ. 38, մասնաշենք 1, տար.89, ներքաղ.տարածք գյուղ Ստրելնա, փ. Սվյազի, Սանկտ Պետերբուրգ, 198515	Ռուսաստան	Դ	23054 16.05.2025